

## ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻՑ ԿԱԶՄՎԱԾ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՇՏԸ

### Ն. Յ. ԴԻԼԲԱՐՅԱՆ

Անձնանուններից կազմված տեղանուններն իրենց տարածվածությամբ չեն գիջում բնության, տեղանքի միավորներ և բնակավայրերի տեսակներ նշանակող բառերից կազմված կառույցներին, սակայն վերջիններին ամենամատ նրանք առավել երիտասարդ են, քանզի հնադարում մարդու մտածողությունն ու աշխարհընկալումը կուսական և անեղծ էր՝ գրեթե չծանրաբեռնված գաղափարական տարբեր հոսանքներով, դրանց հիմնադիրների և առաջամարտիկների անուններով, անձի պաշտամունքի այլազան դրսևորումներն էլ դեռևս չէին արմատավորվել: Տեղանուններ կերտող անձն աշխարհը ճանաչում էր ըստ օբյեկտիվ իրականության, այսինքն՝ հնագույն տեղանունները պատասխանում էին «ի՞նչ է» անվանվող օբյեկտը կամ «ինչպիսի՞ն է այն» հարցերին: Օրինակ՝ Ջոր (այսպես է կոչվում Մեծ Հայքի Գուգարք աշխարհի գավառներից մեկը), Հովիտ (գյուղեր Սասունի գավառում, Ախուրյանի և Ապարանի շրջաններում), Պարտեզ (գավառ Մեծ Հայքի Տայք աշխարհում, գետ Մորոտի ավազանում, ավան Չորրորդ Հայք աշխարհում), Սար (լեռ Կարսի բարձրավանդակում), Ոլոր (լեռնանցքի, բերդի, գետի, գյուղի անվանում է Կիլիկիայում. Կարսում), Մամոտ (բերդ պատմական Ուտիք աշխարհում) և այլն: Միայն ավելի ուշ, երբ ձևավորվեցին նախ՝ հիմնական կրոնական հոսանքները՝ իրենց դիցարաններով, քարոզիչ-առաքյալների ու սրբերի շարքերով, սպա՝ հասարակական աստիճանակարգության հետ կապված պատկերացումները՝ ավազանի, արքաներ և գորապետեր, նրանց պատկանող կամ վերաբերող օբյեկտները՝ բերդերն ու շեները, աղոթավայրերը, երբեմն նաև՝ շրջապատի լեռներն ու լճերը, գետերը... սկսեցին կոչվել ժամանակի տերերի և հերոսների անուններով:

Տեղանվանագետ Վլադիմիր Նիկոնովն այս կապակցությամբ նշում է. «Տոհմացեղային կարգի մայրամուտին ծագեցին անձնանուններից կազմվող տեղանունները: Դրանք ազդարարում էին արդեն խորապես արմատավորված անհավասարությունը տոհմային հասարակության մեջ, որից առանձնանում էր իշխող վերնախավը: Սկզբում անձնանուններից կազմվում էին միայն տվյալ տոհմին վերաբերող օբյեկտների անվանումները, այսպես կոչված հայրանվանական (պատրոնոմիկ) տեղանունները: Տոհմային կարգի քայքայման ժամանակ այս տեղանունները սկսեցին կորցնել նախնական նշանակությունը»<sup>1</sup>:

Ֆեոդալիզմի հաստատման ժամանակ, երբ հողը դարձավ սեփականություն, ստեղծվեցին սերում և պատկանություն արտահայտող մեծաթիվ տեղանուններ: Նման տեղանունների հիմքը անվանակոչվող տարածքի կամ բնակավայրի սեփականատիրոջ անունն է: Երբ ցանկացած տեղանք, շեն և վանք ունի տեր, անվանման ժամանակ վճռորոշ տարբերակիչ հատկանիշ է դառնում սեփականատիրոջ անունը: Տեղանուններում գերիշխող են դառնում «ո՞ւմն է» և ոչ թե «ի՞նչ է» կամ «ինչպիսի՞ն է» անվանվող օբյեկտը հարցերին պատասխանող կազմությունները:

<sup>1</sup> В. А. Никонов. Введение в топонимику. М., 1965, с. 30.

հնչպես օրինակ՝ Ռշտունի իշխանների անվամբ կոչվող գավառը, լեռները, լիճը, բերդերն ու վանքերը...՝ Ռշտունիք, Ռշտունյաց երկիր, Ռշտունյաց լիճ (միջին դարերում նախարարական տոհմի անունով այսպես է կոչվել Վանա լիճը) - Ռըշտունյաց ծով, Ռշտունյաց Սուրբ Թովմասի վանք, Ռշտունյաց Ծիծաղաբեր Սուրբ Աստվածածնի վանք և այլն:

Սեփականատիրոջ հետ մեկտեղ տեղանվանաստեղծման ժամանակ կարևորվում էր նաև տվյալ աշխարհագրական օբյեկտը հայտնագործողի, նվաճողի կամ բնակավայրի հիմնադրի անունը: Ավելի ուշ, երբ պարզ սեփականության գաղափարն այդքան չի արժևորվում, տեղանքի միավորներն ու բնակավայրերը սկսում են անվանվել տեղաբնակների համար հեղինակություն հանդիսացող դեմքերի, սրբացված գործիչների անուններով<sup>2</sup>: Այսպես՝ տասներորդ դարի հայազգի բյուզանդական Հովհաննես Չմշկիկ կայսեր անվամբ Կիլիկիայում, Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգում կոչվել են մի շարք բնակավայրեր և աշխարհագրական օբյեկտներ՝ Չմշկածագի գավառ - Չմշկածագուց երկիր, Չմշկածագի լեռներ (Բյուրակն-Մճձուրյան լեռնաշղթայի հարավային ճյուղավորումներից), Չմշկածագի գետ (Արածանիի աջակողմյան վտակը), Չմշկածագք (բերդաքաղաք Խարբերդի նահանգի Դերսիմի գավառում), Չմշկածագի Սուրբ Նշան, Չմշկիկի կամուրջ...

Պետք է նշել, որ անձնանուններից տեղանուններ կազմելու սկզբունքը թեև գործում է բոլոր ժողովուրդների մոտ, սակայն տարբեր աստիճանի և չափով: Այսպես՝ հարավարևելյան Ասիայի որոշ ժողովուրդներ խիստ հազվադեպ են նման եղանակով անվանում բնակավայրերը կամ աշխարհագրական օբյեկտները<sup>3</sup>:

Անձնանուններից կազմված տեղանունները առավել երիտասարդ են, քան մնացյալ տեղանունները, միաժամանակ՝ ավելի փոփոխական, որովհետև ժամանակի հերոսները հաճախ գահավիժում են, արքաները՝ փոխվում, գաղափարախոսությունները՝ հեղինակագրկվում, ուստի նրանց անվամբ կոչված օբյեկտները վերանվանվում են նորօրյա հեղինակությունների անուններով: Մենք այսօր Հայաստանում և ընդհանրապես ողջ հետխորհրդային տարածքում ակնհայտ են ենք նման մի մեծ շրջափոյի, երբ համայնավարական գաղափարախոսության պարտությունից հետո ոչ միայն քաղաքների ու գյուղերի, այլև երկրամասերի ու պետությունների (Չեչենիան դառնում է Իչկերիա, Յակուտիան՝ Սախա, Մարիական հանրապետությունը՝ Մարի Էլ) անվանումներն են փոխվում: Իոսիֆ Ստալինի անձի պաշտամունքի դատապարտումից հետո քարտեզներից սկսեցին վերանալ նրա անուն-ազգանվան տարբեր փոխակերպումներից կազմված բազմաթիվ տեղանուններ, այժմ արդեն ջնջվում են Վլադիմիր Իլյիչ Լենինի և նրա բազմազգ զինակիցների անուններից ստեղծված հազարավոր անվանումները. դրանք բոլորը պատմության գիրկն են անցնում: Այս գործընթացն ինչ-որ առումով անվերջ է, քանի գոյություն ունի մարդկությունը: Ըիշտ է՝ որոշ ազգերի լեզուներում այն ավելի թույլ է արտահայտված, քանի որ դրանց կողմերն ավանդապաշտ պահպանողական են: Հայերս, ընդհակառակը, աչքի ենք ընկնում նորարարությամբ, ինչի ապացույցը մեր տեղանունների հարափոփոխ դաշտերն են<sup>4</sup>:

Անձնանուններից կազմված տեղանունները իմաստաբանական դաշտում ինքնուրույն դիրք են գրավում. ա) տոհմանուններից առաջացած ձևերը, որոնք, ինչպես վերը նշվեց, հնագույն ծագում ունեն և այսօր գրեթե ջնջվել են՝ *Արշարուն-ճի* - Արշարունիք - Արշարունիս - Արշարունյաց գավառ - Աշարունիք - Աշարունիս

<sup>2</sup> Տե՛ս Յ. Մ. Мурзаев, Очерки топонимики, М., 1974, էջ 237:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 279-280:

<sup>4</sup> Այսուհետ քննվող տեղանունների հիմնական աղբյուրը «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» 1-5 հատորներն են, Եր., 1986, 1988, 1991, 1998, 2001 թթ.:

(գավառ Մեծ Հայքի Այրարատ աշխարհում, այս գավառն ավելի վաղ կոչվում էր Երվանդունիք, որովհետև Երվանդունիների տիրույթն էր), Արշամունիք տոհմա-  
նունից են ծագել նաև Արշարունյաց դաշտ, Արշարունյաց վանք տեղանունները...

**Արծրունի** - Արծրունիք, Արծրունյաց երկիր, բերդ (բացի Վասպուրականից, Թովմա Արծրունու վկայությամբ՝ այսպես է կոչվել նաև Մեծ Հայքի Աղձնիք աշ-  
խարհի Արզն գավառը Արծրունի նախարարներին ենթարկվելուց հետո), Արծ-  
րուհիուհիներ - Արծրուհիուհիների (հնագույն քաղաք հիշատակված ուրարտա-  
կան արձանագրություններում):

**Ամատունի** - Ամատունյաց ավան (գյուղ Արագածոտն գավառում):

**Պալունիք** - Բալունիք - Պահլունիք - Պալունյաց երկիր - Պալունյաց գավառ  
(Պալունի նախարարական տոհմանունից), ընդ որում այս անվամբ երկու գավառ  
կա, երկուսն էլ հիշյալ նախարարական տան սեփականությունն էին. մեկը՝ Տու-  
րուբերան աշխարհում, մյուսը՝ Վասպուրական:

**Պահլավունիք** - Պահլավունյաց, Պահլավունիների իշխանություն (ավատա-  
կան իշխանություն Հայոց Միջագետքում):

**Գնունիք** - Գնունիս (երբեմն այսպես է կոչվել Արբերան գավառը, որտեղ իշ-  
խում էին Գնունիները) - Գնունյաց երկիր, Գնունյաց գավառ:

**Բագրատունիք** (նախարարություն, թագավորություն), Բագրատյան (Բագա-  
րանի անվանումներից)...

**Բզնունի** - Բզնունիք - Բզնունական գավառ - Բզնունյաց գավառ, Բզնունյաց  
լեռներ, Բզնունյաց ծով - Բզնունյաց լիճ (այսպես են կոչել Վանա լիճը), Բզնու-  
նյաց կղզիք, Բզնունյաց քաղաք:

**Հավնունի** - Հավնունիք - Հավնունիք (գավառ Մեծ Հայքի Այրարատ աշ-  
խարհում):

**Մամիկոնյան** (գյուղ Էրզրումի գավառում), Մամզուն Տայք (գավառ մեծ Հայ-  
քում, որը նշանակում էր Մամիկոնյանների Տայք):

**Սյունիք** (դեռևս սեպագիր արձանագրություններում հիշատակված «Սիունի-  
Մունի» տոհմանունից ծագած տեղանուն է, այսպես կոչվել է և՛ Մեծ Հայքի աշ-  
խարհներից մեկը, և՛ միջնադարյան հայոց թագավորություններից մեկը, և՛ գա-  
վառ, և՛ լեռնաշղթա, և՛ բարձրավանդակ, և՛ բերդ, և՛ վանքեր, և՛ ներկայիս Հայաս-  
տանի սարգերից մեկը), Սյունյական - Սյունյաց աշխարհ, Սյունյաստանիք (խիստ  
յուրօրինակ կազմություն է՝ Սյունյաց տանիք, նման այլ կառույցներ «տանիք» բա-  
ռով չեն համոզիպում), Սյունյաց և Բաղսց թագավորություն...

Բ) Դիցանուններից, ինչպես նաև քրիստոնեական սրբերի ու հերոսների, ա-  
ռաքյալների անուններից առաջացած տեղանուններ. նման կազմությունները  
պատմական Հայաստանի տարածքում մեծաթիվ են: Այս խմբում կարելի է տա-  
րանջատել մեհյանների, վանքերի ու մատուռների, անապատների ա՛հ՝ անուննե-  
րը, որովհետև օրինաչափորեն կրոնական օբյեկտների անունները պետք է ծա-  
գեն էթե ոչ կրոնական-ծիսական բառապաշարից, ապա աստվածների և սրբերի  
անվանացուցակից: Երբեմն նման անվանումներ ստանում են նաև բնակավայրե-  
րը, և առավել հազվադեպ՝ բնաշխարհագրական օբյեկտները: Հեթանոսական  
ժամանակաշրջանը հարուստ էր նման տեղանուններով, ընդամին այն դարերում  
հեթանոս աստվածների և աստվածուհիների անուններով կոչվում էին ոչ միայն  
մեհյաններ և ուխտատեղիներ, այլև գավառներ, բերդեր, լեռներ, լճեր, գետեր: Օ-  
րինակ՝ **Արամազդ** (լեռնագագաթ Փոքր կոպկասի լեռնահամակարգում), Արա-  
մազդի լեռնանցք, Արամազդ (գետակ Արաքսի ավազանում) :

**Վահե-Վահագն** աստծու անունից՝ Վահահունիք (գավառ Մեծ Հայքի Այրա-  
րատ աշխարհում), Վահագունիք (գավառ Այրարատ աշխարհում), Վահագնի  
(գետ Կուրի ավազանում), Վահագնասար (լեռնագագաթ և լեռնաբազուկ Բագու-  
մի լեռնաշղթայում), Վահագնաձոր, Վահագնյան ձոր, Վահագնի վերին, Վահագ-  
նի Ստորին, Վահագն (գյուղեր Գուգարքում):

*Տիր* (լեռ Հայկական Տավրոսի լեռնահամակարգում), Տրի (գյուղ)...

*Անահիտի երկիր* - Անահուա գավառ - Անահուական (Գավառ Մեծ Հայքի Բարձր Հայք աշխարհում), Անահուա աթոռ (լեռնագագաթ Հայկական լեռնաշղթայում, ըստ ավանդության՝ այստեղ եղել է Անահիտ աստվածուհու տաճարը), Անահուական (գյուղ), Անահիտ (գետակ Եփրատի ավազանում)...

*Աստղիկ* (լեռնագագաթ Փոքր Հայքում), Աստղիկ (գետ Սեբաստիայում), Աստղիկի բերդ - Աստղաբերդ - Աստղկաբերդ - Աստղկանբերդ - Աստղկան (բերդ Վասպուրական աշխարհում, այստեղ եղել է Աստղիկ աստվածուհու մեհյանը):

*Նանե* (գյուղ Սասունում), Նանենից (գետ Տիգրիսի ափին)...

Հանրահայտ սրբավայրերի մերձակայքում գտնվող բնակավայրերի կամ տեղանքի միավորները հաճախ էին ստանում նույն կամ համահունչ անունը, ինչպես օրինակ՝ *Հովհաննավանք* գյուղն իր անունը ստացել է հռչակավոր *Հովհաննավանքից*։ Առաքել Դավրիժեցու վկայությամբ, մենաստանն այդպես է կոչվել վանքի առաջնորդ Հովհաննի անունով, որին Ղազար Փարպեցին իր փոխարեն թողել է վանահայր, Հովհաննեսաձոր գյուղը Ստեփանավանի շրջանում ևս իր անունը ստացել է մերձակա սրբավայրից, *Գրիգորիս* - *Գրիգորոս* գյուղը պատմական Փոքր Հայքի Սեբաստիայի նահանգում անվանակոչվել է ի հիշատակ սուրբ Գրիգոր Սքանչելագործի, որի գերեզման-ուխտատեղին գտնվում է հենց այդ գյուղում, *Գրիգոր Նարեկացու քարայր*՝ գտնվում է Նարեկ լեռան լանջին, այստեղ ճգնել է հանճարեղ Նարեկացին։ «Մատյան ողբերգության» հեղինակի հիշատակն անմահացնում են չորս վանք-ուխտատեղի Արցախի Հաղորթի շրջանում, Փոքր Հայքի Սեբաստիա և Կեսարիա նահանգներում, ինչպես նաև Վանի նահանգի Նարեկա վանքը։

Վասպուրական աշխարհի Գողթն գավառի *Մեսրոպավանք* գյուղն անվանակոչվել է այդ տարածքում գտնվող համանուն վանքի պատվին, որը, ըստ ավանդության, վերակառուցվել է Մեսրոպ Մաշտոցի և Սյունիքի Ծաբիթ իշխանի ջանքերով։ *Մեսրոպավան գյուղը* և *Մեսրոպավան գետը*, *Սահակ* և *Սահակաբակ* - Սահակաբակք գյուղերն այս սկզբունքի կիրառման արդյունք են... Սահակ Պարթև կաթողիկոսի անվամբ հայտնի են նաև լեռներ, գետակ՝ Սահակասար (լեռ Գեղամա լեռնաշղթայում), Սահակ (Արածանիի վտակներից), Գրիգոր Լուսավորչի անվամբ կոչվել է Բարձր Հայքի Եկեղյաց գավառը...

Հայ առաքելական եկեղեցու դերը մեր պատմության ընթացքում վիթխարի է եղել հատկապես ինքնուրույն պետականության բացակայության ժամանակահատվածներում, երբ եկեղեցին ստանձնում էր նաև աշխարհիկ իշխանության դերը։ Պատահական չէ, որ մեր եկեղեցին սրբերի կարգին էր դասում նաև աշխարհիկ հերոսներին՝ սերմանելով հայրենասիրություն և ազգասիրություն, ինչն էլ դրսևորվում էր տեղանուններում։ Եվ Տրդատ թագավորը, և Վուսնշապուհ արքան, և Մեսրոպ Մաշտոցը, և Գրիգոր Լուսավորիչը, Գրիգոր Նարեկացին, Վարդան Մամիկոնյանը, Սահակ Պարթև կաթողիկոսը... մեր տեղանունների գլխավոր հերոսներն են, պատմական նշանավոր դեմքեր, սրբեր։ Այստեղ են հատվում Բ և Գ խմբերի տեղանունները։

Գ) Պատմական հայտնի դեմքերի անուններից կազմված տեղանուններ, այդ թվում նաև առասպելական հերոսների անուններից ծագած անվանումներ, սրանք ևս բավական մեծաթիվ են։ Պետք է նկատել, որ «հայտնի դեմք կամ հերոս» ձևակերպման ներքո ըմբռնվում են և զուտ տեղական հեղինակություններն ու գործիչները, և անգամ նվաճողները՝ *Սահակյանի կալվածք*, *Սահակյանի* և *Օերեմետովայի ազարակներ*, կամ՝ *խաչակիր Բաղդիհի (Բոլդիհ)* անունը (այս կոմսը, ի դեպ, եղել է Վարդան Այգեկցու մեկենասը) հիմք է դարձել կլիկյան մի շարք տեղանունների համար՝ *Բաղդիհի երկիր* (երկրամաս և լիճ), *Բաղդն* - *Բաղդնի* (գա-

վառակ և գյուղեր)... Վերջիններս առավել հաճախ միկրոտեղանունների համար են հիմք դառնում: Բնակավայրերի, սրբավայրերի հիմնադիրների անունները ևս տեղանվանակերտման զինանոցում են: Այսպես՝ *Ոսկան մելիքը* Գանձակում մի մենաստան էր կառուցել՝ *Ոսկանապատի Սուրբ Աստվածածին*, որի անվամբ կոչվել է նաև մերձակա գյուղը՝ *Ոսկանապատ*, գետը՝ *Ոսկանապատի գետ*, *Նուբարաշեն* - *Նուպարաշեն* (Ավան Մուշի գավառում, որ հիմնել էր *Պողոս-Նուբարաշեն*, 1915 թ ցեղասպանությունից հետո Հայաստանում հաստատված նուբարաշենցիներն այսպես կոչեցին Երևանի հարավ-արևելքում կառուցված ավանը):

Առասպելական բազում իր հերոսներից հայ ժողովուրդը հատկապես սիրել և տեղանունների հիմք է դարձրել *Արային*, *Հայկին*, *Սասունցի Դավթին*, *նրա որդի Փոքր Մհերին*: Բերենք առասպելական հերոսների անուններից կազմված տեղանունների հատկանշական օրինակներ՝ *Արայի* (բնակավայր Այրարատ աշխարհի Նիզ գավառում, այստեղ էլ գտնվում է *Արայի* քարավանատունը), *Արայի* գյուղ (Ապարանի շրջանում), *Արայի լեռ* (լեռ Արագածից հարավ-արևելք, ըստ ավանդության՝ Առասպելական Արա Գեղեցիկը Օամիրամի դեմ պատերազմելու համար իր զորքերը տեղաբաշխել է այս լեռան լանջին):

*Օամիրամ* (թեև այս խարդավալի թագուհին ընկալվում է հայության թշնամու կերպարով, սակայն նրա անվամբ պահպանվել են մեկ տասնյակից ավելի տեղանուններ, միայն ուղիղ «*Օամիրամ*» ձևով կոչվել են գյուղեր, բերդեր, թաղամաս վանում, լեռնագագաթ, ջրանցք, սարավանդ, ողողատ, քաղաքատեղի), *Օամիրամա ակ* - *Օամիրամագետ*, *Օամիրամալաթի բլուր*, *Օամիրամակերտ* (հայ մատենագրության մեջ, սկսած Մովսես Խորենացուց, այսպես են կոչել Վան քաղաքը և նրա բերդը՝ նրա կառուցումը վերագրելով կիսաառասպելական Օամիրամ թագուհուն) - *Օամիրամաշեն* - *Օամիրամա քաղաք* - *Օամիրամու* - *Օամիրամի բերդ*, *Օամիրամի թունել*, *Օամիրամի ձոր* - *Օամիրամյանց ձոր*:

*Հայկ*՝ Հայկաձոր (գյուղեր Վանի գավառում, Ծիրակի մարզում, ձոր Խնուսի շրջանում), *Հայկաձորի լեռնանցք*, *Հայկան* (գավառակ վանում, գյուղեր) *Հայկա-նետ*, *Հայկաշեն* (ավան, գյուղեր Վանի և Էրզրումի նահանգներում), *Հայկապ* (բերդ, գյուղ Էրզրումի նահանգում), *Հայկավան* (գյուղեր Սյունիքի և Արմավիրի մարզերում), *Հայկավանք* (վանքեր, գյուղ Վանի և Բիթլիսի նահանգներում), *Հայկ-Գոմ* (գյուղ Էրզրումի նահանգում), *Հայկյան* նահանգ (երկիր, աշխարհ, հիշատակում է Գրիգոր Մագիստրոսը՝ նկատի ունենալով ողջ Հայաստանը):

*Բել*՝ այսպես է կոչվել Տարոնի գավառի գյուղերից մեկը, բացի այս՝ «*Բել*» անունը որպես արմատ երևան է գալիս մի շարք տեղանուններում, որոնք հատկապես գործածական են օտար աղբյուրներում: Հիշատակվում էին *Բելաբիտենե* (Մեծ Հայքի Չորրորդ աշխարհի գավառներից), *Բելադ-Ալ-Արմեն* (արաբական աղբյուրներում այսպես կոչվել է Կիլիկիան), *Բելադ-Ալ-Սիս* (դարձյա՝ Կիլիկիայի անվանումներից, որ վկայված են արաբական աղբյուրներում), *Բ-Լադիզ* (գյուղ Սեբաստիայի նահանգում), *Բելագաբու* (գյուղ Էրզրումի նահանգում), *Բելաթո* (գյուղ Վանի նահանգում՝ հատկանշական է, որ այսպես է կոչվել նեստորական ասորիների գյուղը), *Բելեմեղիկ* - *Բելամալիկ* (լեռ Լեռնային Կիլիկիայում), *Բելամալիկ բողազ* (լեռնանցք Լեռնային Կիլիկիայում), *Բելենց* (գյուղ) տեղանունները:

*Դավիթ*՝ «Սասնա Մռեր» է ուսի ամենասիրելի այս հերոսի անունը երևան է գալիս հետևյալ ձևերով՝ *Դավթի քար* (քարածայո Սասունում, ըստ ավանդության՝ այս ժայռը հողի մեջ ամրացրել է Սասունցի Դավիթը, որը հովիվ ժամանակ տեսել է իր հոտի վրա գլորվող ժայռը և մի հարվածով խրել այն հողի մեջ), *Դավթի սար*, *Դավթաբերդ* - *Դավթիբերդ*, *Դավթի բլրաշարք*, *Դավիթ-Մհերի բերդ*...

*Մհեր*՝ Մհերի դարպասներ - Մհերի դուռ - Մհեր Կափուսի (քարածայո Վանի մոտ, ժողովուրդն այն Մհերի անվան հետ է կապում պնդելով, թե դյուցազներգության հերոս Փոքր Մհերը, աշխարհի չարիքից հոգնած, փակվել է այդտեղ)...

*Սանասար և Բաղդասար*՝ դյուցազներգության հիմնադիր հերոս եղբայրների անվամբ հայտնի են գյուղեր (Զանգեզուրի գավառում) և լեռնանցք՝ Սանասարա կիրճ (Անտիպոնտական լեռնաշղթայում), վկայված է նաև սեռականաձև կառույցը՝ Բաղդասարենց...

*Շուկիճար*՝ կիսաստվածուհու և էպոսի հերոսուհու անվանը հանդիպում ենք գյուղի, բանավանի և գետի պարագայում, երեքն էլ Գեղարքունիքի մարզում:

Պետք է նշել, որ առասպելական, էպիկական հերոսների, հեթանոս աստվածների անուններից կազմված տեղանուններն ավելի կայուն են, քան թագավորների կամ նախարարների, բացի այդ՝ նման անուններն այսօր էլ՝ դարեր անց՝ քրիստոնեության ժամանակաշրջանում, տեղանվանակերտման հիմք են դառնում: Գուցե պատճառն այն է, որ այդ անունները՝ Անահիտ, Աստղիկ, Վանե, Վահագն, Դավիթ, Հայկ... հայերի համար դարձել են սիրելի և գործածական անձնանուններ, իսկ նախարարների կամ թագավորների անունները մեծամասամբ պահպանվել են որպես պատմական տեղանուններ, որովհետև հետագայի նվաճողները դրանք հաջորդաբար ջնջել են: Անկախության տարիներին էլ ձեռնարկված փորձը, գեթ միկրոտեղանուններում վերակենդանացնել դրանք, հետևողական չեղավ: Բերենք հատկանշական մի օրինակ՝ Երևանի *Ամիրյան փողոցը* վերանվանվեց *Վոսմշապուհ արքայի* անվամբ, որը մեր լուսավորյալ և ազգասեր թագավորներից էր, բավական է հիշել, որ գրերի գյուտը կատարվել է նրա արքայության օրոք և օժանդակությամբ, սակայն երկու տարի անց տեղի ունեցավ դարձ ի շրջանս յուր՝ հեղափոխական Ամիրյանը հաղթեց թագավորին: Գուցե իրոք, թագավորատյաց ազգ ենք...

Ընդհանրապես «Գ» խմբի տեղանունները երևան են բերում անձնանուններից տեղանուն ստեղծելու ամենագործուն կաղապարները: Այստեղ կարելի է առանձնացնել մի օրինակափություն ևս՝ իզական անունները հայերենում բավական հազվադեպ են տեղանվան հիմք դառնում, պատճառը հայ հասարակության խիստ հայրիշխանական բնույթն է: Ի դեպ, հայկական ազգանունների ծագումնաբանությունը ի հայտ է բերում նույն իրողությունը. իզական հիմքով ազգանունները խիստ հազվադեպ են՝ Շուշանյան, Հասմիկյան, Գայանյան, Դիլբարյան (Դիլբար պարսկական կանացի անուն է)... Ուստի անդրադառնալով իզական անուններից կամ կին հերոսների անուններից ծագած տեղանուններին ևս: Անահիտ և Աստղիկ աստվածուհիներին բացառյալ՝ հանդիպում ենք հետևյալ անուններից կազմված ձևերի՝ *Հոփսիսմե, Գայանե, Նունե, Մարիամ*... այս սուրբ կույսերի անունները մեր տեղանուններում արտահայտվել են հիմնականում իբրև պատմական վկայագրեր Հայաստանում քրիստոնեության տարածման և պետականորեն ճանաչման ժամանակներից: Այսպես՝ *Հոփսիսմե* (գետակ Արաքսի ավազանում, որի ջրերը բուժիչ հատկություններ ունեին, քարայր Սեպուհ լեռան գագաթներից մեկին, այստեղ երկու քարայր կար՝ մեկում ճգնել է Գրիգոր Լուսավորիչը, մյուսում՝ Հոփսիսմեն և Մարիամը (Հոփսիսմեի աղբյուր. աղբյուր Էրզրում քաղաքի մոտ, որտեղ ըստ ավանդության ապրել է Հոփսիսմեն, նաև ուխտատեղի է, այստեղից ոչ հեռու Հոփսիսմյանց անապատն է), Հոփսիսմեի ձոր (Արցախի Ասկերանի շրջանում, մոտակայքում գտնվում է համանուն վանքը), Հոփսիսմյանց քարայր (քարայր Գևերույնի լեռների ստորոտում, ուխտատեղի է), Հոփսիսմեի բանգստարան, Հոփսիսմեի վկայարան, Հոփսիսմյանց առապարի վանք, Հոփսիսմեի տաճար (այս անուններով է հայտնի Էջմիածնի հայրապետական աթոռին ենթակա վանքը, որն ըստ ավանդության՝ կառուցվել է Հոփսիսմեի նահատակության վայրում՝ նրա ոսկորների վրա), Հոփսիսմե և Գայանե (գույգ մատուռներ վայրում)...

*Գայանե*՝ այս կույսի անվամբ կոչվել են միայն վանքեր, եկեղեցիներ, ինչպես՝ Գայանե (եկեղեցի Ասկերանի շրջանում), Սուրբ Գայանե (եկեղեցի Էրզրումի գավառում և Էջմիածնի հանրահայտ տաճարը)...

*Մարիամ*՝ այս կույսի անունն ամենատարածվածն է տեղանուններում, գուցե

պատճառն այն է, որ աստվածամոր անվան գործոնն է գումարվում, ընդ որում Մարիամ կույսի և աստվածամոր տեղանունների դաշտերը բավական հստակ տարանջատվում են, որովհետև վերջինիս անունից ծագած տեղանուններում գրեթե միշտ առկա է «աստվածամայր» որոշիչը, իսկ կույսի անվան առջև՝ միայն «սուրբ» որոշիչը:

Մարիամ - Մարիամո (գյուղեր Վանի և Էրզրումի նահանգներում), Մարիամ (քարայր և ուխտավայր Երզնկայի գավառում), Մարիամ - Մարիամի լեռներ, Սուրբ Մարիամի լեռ, Մարիամ դաղ (լեռներ և լեռնագագաթ Հայկական պար լեռնահամակարգում), Մարիամ Նիշին (քերդ Ծիրակի գավառում), Մարիամշիշ (քերդ Ջեթունում), Սուրբ Մարիամ - Սուրբ Մարիանե - Մարիանե կույսի վանք (վանքեր Արագածոտնի և Ծիրակի գավառներում), Մարիամաշեն (մենաստան Ծիրակում)...

*Նունե՝* այս հիմքով գյուղեր են անվանակոչվել՝ Նունեա, Նունի, Նունից (Ախալցխայի շրջանում, Մալաթիայի և Գողթնի գավառներում):

Բացի կույսերի անուններից՝ տեղանվանահիմք դառնալու պատվին արժանացել են թագուհիների, թագավորների, նախարարների քույրերի ու դուստրերի անունները:

*Օուշան* անունը Հայաստանում հարգի էր, այստեղից էլ՝ տեղանուններում նրա հաճախադեպ լինելը: Այսպես՝ Օուշանա գյուղ - Օուշանիկ - Օուշանից գյուղ - Օուշանց (ըստ ավանդության՝ Վանի գավառում գտնվող այս գյուղը պատկանել է Վասպուրականի Սենեքերիմ արքայի դստերը, որի խաչարձանը գյուղի մեջ էր և կոչվում էր Օուշան խաթունի գերեզման), Օուշանիկ արքայադստեր անվամբ կոչվել է նաև մերձակա վանքը, և լեռը՝ Օուշանա վանք, Օուշանից լեռ - Օուշանց լեռ (շուշան ծաղկի հետ չի շփոթվում ավանդության շնորհիվ): Իսկ Աշոտ թագավորի քույր Օուշանի անվամբ հայտնի է մեկ այլ Օուշանա վանք Արշարունիք գավառում (ավանդության համաձայն՝ Օուշանն ուզում է պատարագի գնալ մերձակա Սուրբ Թեոդորոս վանքը, բայց մինչ զարդարվում է, պատարագն ավարտվում է: Թագավոր եղբայրը հանդիմանում է. «Մինչև որ Օուշան զարդարվի, ժամեր կարձակվի»: Դրա համար էլ Օուշանը կառուցում է այս վանքը):

Ամփոփելով արձանագրենք, որ անձնանուններից տեղանուններ կազմելու եղանակն արդի հայերենում գործունակ է «Գ» կաղապարով. իբրև հիմք ընտրվում են պատմական հերոսների անունները: Անկախացման և ազգային զարթոնքի ժամանակաշրջանում պետությունն իր հայացքը հառում է անցյալի հայրենասեր հերոսներին՝ փորձելով նրանց օրինակով դաստիարակել առավել պետականամետ, հայկական մտածողությամբ, ազգային արմատներին հասու սերունդներ:

**Н. А. ДИЛБАРЯН - Семантическое поле топонимов, образованных на основе антропонимов .** - Топонимы, образованные из антропонимов, составляют одну из самых больших групп в семантическом поле топонимов армянского языка. Метод составления топонимов из антропонимов продуктивен и сейчас. В качестве основы, как правило, используются имена национальных героев прошлого. В период независимости и становления национального демократического государства имена героев-патриотов все чаще становятся самостоятельными топонимами и образуют целые топонимические ряды. Топонимическими основами служат: 1) родовые имена, 2) имена богов и божеств языческого и христианского периодов, 3) имена известных исторических личностей, в том числе мифологических героев - как мужчин, так и женщин.